ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

«Տարրական դասարանների, երաժշտություն, կերպարվեստ, ֆիզկուլտուրա առարկաների» առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի հունիսի 26 -ին:
Նիստին մասնակցել են Տարրական դասարանների, երաժշտություն, կերպարվեստ և ֆիզկուլտուրա առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Առարկայական մասնախմբի նիստի օրակարգի ներկայացում (զեկուցող՝ Ս. Գորգինյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. Վերաքննությունների կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքներ:
4. «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի բնութագրիչների մշակման աշխատանքների ընթացքի քննարկում:

Լսեցին՝

1. «Տարրական դասարանների, երաժշտություն, կերպարվեստ, ֆիզկուլտուրա առարկաների» մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը ներկայացրեց նիստի օրակարգը բաղկացած 4 հարցից:

Լսեցին՝

2. Տարրական դասարանների մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը զեկուցեց նախորդ նախորդ նիստում կայացված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ: Ներկայացվեց առարկայական թեմատիկ պլանների կատարման, հաշվետվությունների նախագծերի պատրաստման ընթացքը, ինչպես նաև անհատական ուսումնական պլանների (ԱՈՒՊ) տարեկան արդյունքների ամփոփման և ներկայացման ուղղությամբ կատարված աշխատանքները: Նշվեց, որ նախատեսված աշխատանքների հիմնական մասը կատարվել է սահմանված ժամկետներում, իսկ մնացած աշխատանքներն ավարտական փուլում են:

Լսեցին՝

3. Տարրական դասարանների մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը տեղեկացրեց, որ սահմանված կարգով 4-րդ դասարանի սովորող Էլինա Սահակյանի համար կազմակերպվելու է վերաքննություն հուլիսի 2-8 ընկած ժամանակահատվածում՝ նշելով որ հստակ օրը կորոշվի մանկավարժական խորհրդի հունիսի 29-ի նիստում: Հանձնարարեց դասղեկին հետևողական լինել, որպեսի աշակերտը ներկայանա սահմանված ժամկետում վերաքննության: Նշվեց, որ մայիսին կազմակերպված լրացուցիչ քննությունների համար թեստերն արդեն պատրաստված են եղել 3 տարբերակով և քանի որ դրանք չեն օգտագործվել սովորողի քննության չներկայանալու պատճառով, առաջարկեց մանկավարժական խորհրդի նիստում քննարման ներկայացնել նույն տեստերը վերաքննության ժամանակ օգտագործելու հնարավորությունը:

Լսեցին՝

4. Տարրական դասարանների մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը ներկայացրեց «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի բնութագրիչների մշակման աշխատանքների ընթացքը: Քննարկվեցին մշակվող բնութագրիչների բովանդակային և մեթոդական առանձնահատկությունները: Նշվեց, որ բնութագրիչների ամբողջական և որակյալ մշակումը ծավալուն ու բազմափուլ գործընթաց է, որի ավարտի համար անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի 2026 թվականի հունիսի 26-ի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել մասնախմբի ղեկավարի զեկուցումը նախորդ նիստում կայացված որոշումների կատարման, առարկայական թեմատիկ պլանների, հաշվետվությունների նախագծերի պատրաստման և ԱՈՒՊ-ների տարեկան արդյունքների ամփոփման վերաբերյալ: Շարունակել ավարտական փուլում գտնվող աշխատանքները և դրանք ավարտել մինչև հուլիսի 3-ը:
3. Հանձնարարել դասղեկին հետևողական լինել սովորողի և նրա օրինական ներկայացուցչի իրազեկվածության ապահովման և սահմանված ժամկետում վերաքննությանը ներկայանալու գործընթացի նկատմամբ:
4. Մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնել մայիս ամսին լրացուցիչ քննությունների համար նախապես մշակված, սակայն սովորողի քննությանը չներկայանալու պատճառով չօգտագործված քննական թեստերի՝ վերաքննության ընթացքում կիրառման հնարավորության հարցը:
5. Շարունակել «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի բնութագրիչների մշակման աշխատանքները՝ հաշվի առնելով նիստի ընթացքում ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները:
6. Հաշվի առնելով, որ «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի բնութագրիչների մշակումը ծավալուն և բազմափուլ աշխատանք է, արձակուրդներից հետո՝ նոր ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ մասնախմբի նիստում քննարկել և սահմանել աշխատանքների ավարտի հնարավոր խելամիտ ժամկետներ:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Ս. Գորգինյան**

Քարտուղար՝ **Մ. Հակոբջանյան**

29.06.2026